Մինչև դեկտ. 18–ը վրաց զօրամասերը նահանջեցին ու կենտրոնացան Սաղախլուի շրջանում: Հետզհետէ Թիֆլիսից հասան նոր ուժեր: Հայկական ճակատ էր ուղարկուել ժողովրդական գւարդիան: Ամբողջ Վրաստանը ոտքի էր հանուած, զօրահաւաք էր կատարւում: Թիֆլիսում, խորհրդարանի նիստերում սպառնական ճառեր էին արտասանւում, մամուլը կրակ ու շանթ էր թափում հայերի գլխին. հայութիւնը դրուած էր օրէնքից դուրս. տղամարդիկ հարիւրներով ձերբակալւում և Քութայիս էին աքսորւում: Առհասարակ, ազգային կրքերը սրուել էին անասելի աստիճանի:

Դեկտ. 18–ին Սաղախլու եկաւ և Վրաստանի զինուորական նախարարը, 1000 թարմ զինուորներ, մի հարիւրեակ ձիաւոր, 3 լեռնային մարտկոց և վերջին գրահապատ դնացքը: Զօր. Ցուլուկիձէն պատրաստւում էր ուժեղ հակայարձակման:

Հայկական ուժերը սկզբից մինչև այժմ մնացել էին նոյնը. թիկունքից համարեա ո՛չ մի լրացում չէր դալիս. ճանապարհները փակուած էին, և կառավարութեան ուշադրութիւնը գրաւած էր Շարուրի ճակատում սպառնացող բարդութիւններով: Պարսկաստանից ու Նախիջևանից հայրենիք վերադարձող բազմահազար թիւրք զինուորները՝ անկարգ ու բոլշևիկացած՝ ահ ու դողի էին մատնել մերձակայ շրջանների հայերին, և կառավարութիւնը ճիգ էր լարում այդ փորձանքից ազատուելու: Վրաց ճակատը գրեթէ ամբողջապէս մնացել էր Դիլիջան—Լոռիի զօրամասին և Ղազախի ու Լոռիի կամաւորներին:

Այդ ուժերով Դրօն որոշեց շրջապատել ու ջարդել Ցուլուկիձէի զօրամասը: Գնդ. Տէր–Նիկողոսեանին նա հրամայեց Բոլնիս–Խաչէնից մի դումարտակ առաջ քաշել դէպի արևելք՝ երկաթուղու կողմը և ցուցական շարժումներով օժանդակել Կորոլկովի զօրասիւնին, իսկ Կորոլկովին հրամայեց երկու թնդանօթ և 3 վաշտ թողնել Հայրումում և մնացած ուժերով, Բարդաձորի և Գիւլբէգիի վրայով, անցնելով Դամիա գիւղը, վրացիների թիկունքը՝ ջարդել նրանց՝ լուրջ ուշադրութիւն դարձնելով Շուլաւերից Օփրէթ տանող ճանապարհի վրա: Դեկտ. 19–ին փոխ–գնդ. Կորոլկովին միացաւ և միլիցիոն գունդը 350 զինուորներով ու 2 գնդացիրներով, որին հրամայւեց գրաւել Շուլաւերը:

Երեկոյեան դէմ, 4րդ գնդի 6րդ վաշտը փոխ–գլխ. Ֆիյէրկովսկիի հրամանատարութեամբ և առանձին ձիաւոր գնդի 2րդ դիվիզիոնի 2րդ հարիւրեակը տեղակալ Տէր–Մարտիրոսեանի գլխաւորութեամբ, սեփական նախաձեռնութեամբ յարձակման դիմեցին և գրաւեցին Սաղախլուն: Վրացիները սպիտակ դրօշ բարձրացրին: Բայց հէնց այդ միջոցին, վրա հասաւ վրաց զրահապատը և մօտենալով կայարանին՝ սպանիչ կրակ բացեց հայերի վրա: Զրահապատի օգնութեամբ վրաց զինուորները շրջապատեցին 6րդ վաշտի և 2րդ հարիւրեակի զինուորներին, շատերին սպանեցին և գերի առին Ֆիյէրկովսկիին ու Տէր–Մարտիրոսեանին մօտ 30 զինուորներով: